ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 180-Ա 07 ապրիլի 2025 թ.

«ՄԱՐՏՈՒՆՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 14-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի դրույթներով

որոշում եմ՝

1. Հաստատել «Մարտունու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 2025-2030 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը:

07.04.2025

ՎԱՀԱՆ ՋԱՐՈՅԱՆ

Подписано: ZAROYAN VAHAN 3103860463

ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Վ. ՋԱՐՈՅԱՆ
ք.Գավառ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈՓՈԽԱՐԻՆՈՂ

Վ. ՋԱՐՈՅԱՆ _____

«07» _____04_____ 2025թ

«ՄԱՐՏՈՒՆՈՒ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

2025-2030 թվականների

ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագիրը կազմող՝ «Մարտունու բժշկական կենտրոն»

տնօրեն՝ Անդրանիկ Հարությունյան

2025թ.

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ 3

Ընդհանուր տեղեկություններ 3

ԲԱԺԻՆ I. ԿԵՆՏՐՈՆԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 5

Գլուխ 1. Կենտրոնի առաքելությունը 5

Գլուխ 2. Կենտրոնի նպատակները 6

ԳԼՈՒԽ3. Կենտրոնի գործունեության հիմնական ուղղությունները 9

ԲԱԺԻՆ II. ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 11

Գլուխ 4. Բժշկական ցուցանիշներ 11

Գլուխ 5. Կառուցվածքը 12

Գլուխ 6. Ֆինանսական վերլուծություն 13

Գլուխ 7. Կենտրոնի ուժեղ և թույլ կողմերը 14

ԲԱԺԻՆ III. ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ 15

Գլուխ 8. Կենտրոնի արտաքին միջավայրում հնարավոր երևույթների կանխատեսում 15

ԲԱԺԻՆ IV. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆ 16

Գլուխ 9. Հասույթի կանխատեսում 17

Գլուխ 10. Բուժական պրակտիկա 18

Գլուխ 10. Կադրային քաղաքականություն 20

ԲԱԺԻՆ V. ՎԵՐՋԱԲԱՆ 21

ՆԱԽԱԲԱՆ

Ընդհանուր տեղեկություններ

<<Մարտունու Բժշկական կենտրոն>> ՓԲԸ (այսուհետ՝ նաև Կենտրոն) հիմնադրվել է 2009թ՝ ՀՀ կառավարության 27.09.2007 թ. N 1218-Ն որոշման հիման վրա:

Տեղակայված է Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի Գետափնյա 2-րդ փողոց 16/1 հասցեում:

Սպասարկում է հիմնականում Մարտունի խոշորացված համայնքի՝ շուրջ 84000 (ութսունչորս հազար) բնակչությանը :

Կենտրոնը հանդիսանում է ստրատեգիական կարևորության բժշկական կենտրոն, քանի որ տեղակայված է Վայոց Ձորի, Գեղարքունիքի մարզի խաչմերուկում, սպասարկում է նաև սահմանամերձ շրջանների ազգաբնակչությանը:

Ընկերությունը ստեղծված է <<Մարտունու Հիվանդանոց>> և <<Մարտունու Պոլիկլինիկա>> ՊՓԲԸ-ների միաձուլման արդյունքում:
Մատուցում է ներհիվանդանոցային և արտահիվանդանոցային բժշկական ծառայություններ:
Հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն, բաժնետոմսերի 100 տոկոս սեփականատերն է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունը՝ ի դեմս լիազոր մարմնի՝ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի: Կարգավորվում է ինչպես «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով, այնպես էլ՝ այլ նորմատիվ իրավական ակտերով:
<<Մարտունու բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն իր գործունեությունը ծավալում է նոր շենքում, որը կառուցվել է ՀՀ Առողջապահության նախարարության կողմից՝ ՀՀ Կառավարության և Համաշխարհային բանկի համագործակցության շրջանակներում: 2024 թվականի փետրվար ամսին շահագործման է հանձնվել Մարտունու ԲԿ-ի նոր մասնաշենքը, իր նոր գործիքային և ախտորոշիչ հետազոտությունների հնարավորությամբ, մասնավորապես՝ համակարգչային շերտագրում, ԷՆՄԳ, ԷԷԳ, հոլտեր մոնիթորինգ, տրեդմիլ թեստ: Ավելացել է նաև ուլտրաձայնային հետազոտությունների ծավալները և գաստրոսկոպիական, կոլոնոսկոպիական հետազոտությունները: Նոր ծառայությունների և գործիքային հետազոտությունների, էնդոպրոթեզավորման, պլաստիկ վիրաբուժության և ՔԿԱ վիրահատական ծառայությունների ներդրմամբ ավելացել է բուժօգնության ծավալների շրջանակը և համապատասխանաբար հասույթը:
Նախատեսվում է ապագայում ներդնել ուռուցքաբանության ոլորտում մատուցվող քիմիոթերապիայի ծառայությունը:

ԲԱԺԻՆ Ի. ԿԵՆՏՐՈՆԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Գլուխ 1. Կենտրոնի առաքելությունը

Կենտրոնի առաքելությունն է՝ ժամանակին համահունչ և մատչելի բուժօգնության ու սպասարկման կազմակերպումը:

Կենտրոնի աշխարհագրական դիրքը և մասնագիտական հագեցվածությունը թույլ է տալիս այն դիտել որպես մարզային կարևորագույն և ստրատեգիական կենտրոն, հատկապես հաշվի առնելով, որ այն տեղակայված է Վարդենիս և Վայոց Ձոր տանող ճանապարհի խաչմերուկում և սպասարկում է սահմանամերձ տարածքների բնակչությանը:

Կենտրոնի երկարաժամկետ նպատակն է մատուցել բժշկական ծառայություններ՝ ներգրավելով ոլորտի լավագույն մասնագետներին, բեռնաթափել մայրաքաղաքի հիվանդանոցների ծանրաբեռնվածությունը և մարզի բնակիչներին մատուցել անհրաժեշտ բժշկական օգնություն՝ առանց լրացուցիչ ծախսերի և ժամանակի կորստի:

Գլուխ 2. Կենտրոնի նպատակները

Բուժական մասով Կենտրոնի նպատակներն են՝

1. Ընտանեկան բժշկի գրասենյակի ձևավորում

Ընկերության նպատակն է ապագայում ձևավորել ընտանեկան բժշկի գրասենյակ, որը կնպաստի ազգաբնակչության առողջության առաջնային պահպանման որակի բարձրացմանը, հիվանդությունների կանխարգելմանը և առողջ ապրելակերպի մասսայականացմանը:

2. Մատուցել բժշկական ծառայություններ՝ Կենտրոնի համար հնարավոր ամբողջական սպեկտրը

Հասնել հնարավոր բոլոր հիվանդությունների հիվանդանոցային պայմաններում բուժմանը, սպասարկել բնակչությանը տեղում՝ հնարավորություն ընձեռելով ազգաբնակչությանը խնայել ժամանակ և ֆինանսական ռեսուրսներ:

3. Սարքավորումների վերազինում

Վերազինել հիվանդանոցային ծառայությունը արդիական սարքավորումներով՝ ընդլայնելով մատուցվող բժշկական ծառայությունների տեսակները և որակը (աչքի վիրահատական սարքավորումներ, արթրոսկոպ, բիմոթերապիա իրականացնելու համար անհրաժեշտ սարքավորումներ):

4. Հեռահար բժշկության օգտագործում

Օգտագործելով հեռահար բժշկության կազմակերպման առկա ռեսուրսը՝ հասնել Երևանի և արտասահմանյան առաջատար բուժհաստատությունների հետ համագործակցությանը հիվանդությունների ախտորոշման և բուժման փորձի փոխանակման բնագավառում:

5. Բարձրորակ կադրերով հագեցվածությունը

Ավագ և միջին բուժանձնակազմին շարունակական մասնագիտական վերապատրաստման և կատարելագործման դասընթացների միջոցով հասցնել նոր որակական մակարդակի՝ ժամանակակից բժշկության պահանջներին համապատասխան, առողջապահության նախարարության կողմից սահմանված կարգով:

Կառավարչական մասով Կենտրոնի նպատակներն են՝

1. Կենտրոնի տարեկան հասույթի ավելացում՝ այդ թվում վճարովի ծառայությունների ընդլայնման ճանապարհով

Միջնաժամկետ կտրվածքով Կենտրոնը նպատակ ունի շարունակաբար ավելացնել հասույթը, որի զգալի մասը պետք է իրականացվի ի հաշիվ վճարովի ծառայությունների: Հասույթի ավելացումը նախատեսվում է իրականացնել մի կողմից շուկայում զբաղեցրած դիրքի բարելավմամբ և բնակչությանը տեղում ծառայություններ մատուցելով, մյուս կողմից ֆինանսական խնդիրների պատճառով բժշկական օգնություն չստացող անձանց համար բժշկական օգնությունը հասանելի դարձնելու ճանապարհով:

2. Կենտրոնի կադրային հագեցվածություն և երիտասարդ մասնագետների ներգրավում

Կենտրոնի աշխարհագրական դիրքը հնարավորություն է տալիս լինել գրավիչ գործատու ինչպես մարզի հարակից շրջաններում բնակվող, այնպես էլ մայրաքաղաքի մասնագետների համար: Կենտրոնը խիստ կարևորում է

երիտասարդ մասնագետների ներգրավումը բժշկական անձնակազմում, որի համար մշակում է երիտասարդների նորարար շահադրդման (մոտիվացիայի) մեխանիզմներ, մասնավորապես ճկուն վարձատրության, բնակության և այլ կենցաղային խնդիրների լուծման ճանապարհով:

3. Կենտրոնի ֆինանսական կառավարման արդյունավետության բարձրացում

Բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների գները խիստ զգայուն են տնտեսական իրավիճակի ցանկացած փոփոխության նկատմամբ, ուստի Կենտրոնի միջնաժամկետ նպատակն է իրականացնել ծախսերի արդյունավետ կառավարում, ունենալ վճարումների ճկուն մեխանիզմներ և տնտեսված ֆինանսական միջոցներ՝ միևնույն ժամանակ պահպանելով անձնակազմի և բուժառուների գոհունակության բարձր մակարդակը ու Կենտրոնի ցանկալի շահութաբերությունը:

4. Մասնագիտական աճ և փորձի փոխանակում

Առողջապահական ծառայությունները համարվում են ամենաարագ զարգացող ուղղություններից մեկը, ուստի նույնիսկ լավագույն մասնագետների համար պարբերաբար իրականացվող վերապատրաստումները և փորձի փոխանակումը կենսական կարևորություն ունեն: Կենտրոնն այս ուղղությամբ նախատեսում է իրականացնել երկու ծրագիր՝ հեղինակավոր մասնագետների հրավիրում որակյալ բուժօգնության մատուցման համար և անձնակազմի պարտադիր վերապատրաստումներ գործուղումների կամ առցանց դասընթացների միջոցով:

ԳԼՈՒԽ3. Կենտրոնի գործունեության հիմնական ուղղությունները

Կենտրոնի գործունեության հիմնական ուղղություններն են՝

1. Ամբուլատոր բժշկական ծառայություններ

Կենտրոնը հանդես է գալիս որպես տարածքային ամբուլատոր կենտրոն, որն ունի շուրջ 11 999 (տասնմեկ հազար ինը հարյուր ինսունինը հազար) կցագրված բնակչություն Մարտունի քաղաքից և հարակից բնակավայրերից: Առաջնային բուժօգնությունն ապահովում են 18 փորձառու բժիշկներ և 29 միջին և կրտսեր բուժանձնակազմ: Ամբուլատոր ծառայությունների գծով հիմնական հասույթը ստացվում է ՀՀ առողջապահության նախարարությունից՝ պետական նպատակային ծրագրի շրջանակներում: Կենտրոնը խիստ կարևորում է ամբուլատոր ծառայությունների դերը բնակչության առողջապահական ցուցանիշների բարելավման մեջ, ուստի նպատակ ունի ավելացնել յուրաքանչյուր քաղաքացու տարեկան այցերի միջին քանակը և մատուցել հավելյալ ծառայություններ՝ ուղղված հիվանդությունների կանխարգելմանն ու վաղ հայտնաբերմանը:

2. **Հակատուբերկուլոզային, ուռուցքաբանական և մաշկավեներաբանական դիսպանսեր բուժօգնություն**

Կենտրոնն ունի առանձին հակատուբերկուլոզայիին, ուռուցքաբանական մաշկավեներաբանական դիսպանսեր ծառայություններ

3. Հիվանդանոցային բժշկական ծառայություններ

Կենտրոնի գործունեության կարևորագույն ուղղություններից է հիվանդանոցային բժշկական ծառայությունների մատուցումը, մասնավորապես անեսթեզիոլոգիական, մանկական անեսթեզոլոգիական, վիրաբուժական, հեմոդիալիզային, ընդհանուր թերապևտիկ, համաճարակաբանական, վնասվածքաբանական, օրթոպեդիական, վարակիչ, մանկաբուժական և վերակենդանացման բնույթի:

4. Շտապ բժշկական օգնություն

Կենտրոնն իրականացնում է Մարտունի քաղաքի, հարակից բնակավայրերի բնակիչների, անհետաձգելի դեպքերի, ճանապարհային պատահարների շտապ բժշկական օգնություն: Շտապ բժշկական օգնությունը հագեցված է մասնագիտացված անձնակազմով, ավտոպարկով, անհրաժեշտ բուժտեխնիկայով և աշխատում է շուրջօրյա հերթապահության ռեժիմով՝ երկու գծային բրիգադով: Տարեկան կատարում է մինչև 9114 (ինը հազար հարյուր տասնչորս) կանչ:

5. Այլ բժշկական ծառայություններ

Կենտրոնն ունի իր ախտորոշիչ-լաբորատոր կենտրոնը, դեղատունը, ախտահանման բաժանմունքը որոնք աշխատում են անխափան, ապահովելով ընկերության կողմից մատուցվող բուժծառայությունների բարձր որակը: Ֆունկցիոնալ ախտորոշիչ ծառայությունն իր մեջ ներառում է՝

- Ներզննական (էնդոսկոպիկ ծառայություն)
- Լապորոսկոպիկ ծառայություն
- Էխոսրտագրություն
- Էլեկտրոէնցեֆալոգրաֆիա
- Էլեկտրոներյոմիոգրաֆիա
- Հոլտեր մոնիթորինգ և տրեդմիլ թեստ
- Համակարգչային շերտագրում
- Ուլտրաձայնային հետազոտություն
- Ռենտգեն ծառայություն

Լաբորատոր ծառայությունը իր մեջ ներառում է՝

- Կլինիկական
- Կենսաքիմիական
- Իմունոլոգիական
- Շճաբանական
- Պաթոհյուսվածքաբանական
- Բջջաբանական լաբորատոր ծառայությունները:

2020 թվականին Կենտրոնում ծավալվել է հեմոդիալիզի բաժանմունքը, որը կարող է սպասարկել մինչև 48 բուժառուի:

2024 թվականին Կենտրոնը հագեցվել է աչքի ախտորոշիչ բարձրակարգ սարքավորումներով, որոնք ընկերությանը տրամադրել է Հայկական ակնաբուժական ասոցացիան:

ԲԱԺԻՆ II. ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Գլուխ 4. Բժշկական ցուցանիշներ

2018-2024 թթ Մարտունու ԲԿ ՓԲԸ-ում ստացիոնար /հիվանդանոցային/ բուժում են ստացել.

Տարեթիվը	Պետ պատվերով բուժում ստացածներ	Վճարովի հիմունքներով բուժում ստացածներ	Ընդամենը
2018	3043	198	3241
2019	3736	205	3941
2020	3343	228	3571
2021	5245	376	5621
2022	5300	507	5867
2023	4207	524	4731
2024	4430	613	5043

Աղյուսակ 1. <<2018-2024 թթ <<Մարտունու ԲԿ>> ՓԲԸ –ում ստացիոնար բուժում ստացած անձանց թիվը>>

Գլուխ 5. Կառուցվածքը



Գլուխ 6. Ֆինանսական վերլուծություն

Մարտունու ԲԿ ՓԲԸ ֆինանսական հոսքերը 2018-2024 թթ

(հազար դրամ)

Տարեթիվ	Պետ. պատվեր	Վճարովի ծառայություն	Որից բժշկական ծառայություններ	Ոչ բուժական ծառայություն ներ	Ընդամենը	Covid 19 բաժանմունք	Ներառյալ Covid 19
2018	436483	84981	77594	7387	521464	-	521464
2019	566768	115280	112054	3226	682048	-	682047.9
2020	807802	146872	139763	7109	954674	223209	1177883
2021	982252	305847	301039	4808	1288100	330021	1618121.1
2022	1045253	259283	254182	5101	1304536	9321	1313857
2023	981185	257126	245433	11693	1238311	-	1238311
2024	1054226	340650	1392913	1963	1394876	-	1394876

Աղյուսակ 2. <<2019-2024 թթ <<Մարտունու ԲԿ>> ՓԲԸ ֆինանսական հոսքերը>>

Գլուխ 7. Կենտրոնի ուժեղ և թույլ կողմերը

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

- Տարածաշրջանային նշանակություն՝ հատկապես սահմանամերձ շրջանների բնակչության սպասարկման գործում
- Որակյալ բազմապրոֆիլ մասնագիտական կադրերով հագեցվածություն
- Արտակարգ իրավիճակներում համապատասխան ծառայությունների արագ ծավալում
- Բարեգործների կողմից օգնության պատրաստակամություն և ներդրումների իրականացում
- Վիրաբուժության և օրթոպեդիայի բնագավառում նորագույն տեխնոլոգիաների և բուժման ժամանակակից մեթոդների կիրառում, որը հանգեցնում է ֆինանսական լրացուցիչ եկամուտների
- Շահառուներին բուժօգնության ցուցաբերման որակը և արդյունավետությունը
- Ճշգրիտ և ժամանակակից դիագնոստիկ հետազոտությունների առկայությունը և մատչելիությունը
- Ազգաբնակչության հետ մշտական պրոֆիլակտիկ աշխատանքների արդյունավետությունը
- Նոր շենքային պայմանները լիարժեք ապահովում են հիվանդների որակով սպասարկման և բուժման գործընթացը
- Ավագ և միջին բուժաշխատողների շարունակական մասնագիատական զարգացման ապահովում:

ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Որոշակի ծառայությունների բացակայություն (աչքի վիրահատություն, սրտի ստենդավորում,)

ԲԱԺԻՆ III. ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Գլուխ 8. Կենտրոնի արտաքին միջավայրում հնարավոր երևույթների կանխատեսում

Հաշվի առնելով կենտրոնի տարածաշրջանային դիրքը և նպատակ հետապնդելով բարձրացնել մատուցվող ծառայությունների որակը նախատեսվում է վերազինել բժշկական կենտրոնը արդիական սարքավորումներով:

Օրենսդրական բարեփոխումները անպայմանորեն անդրադառնում են առողջապահական ոլորտի Կենտրոնների վրա, որովհետև նրանք մի կողմից համարվում են խոշոր գործատուներ, մյուս կողմից ունեն մեծածավալ ապրանքային ձեռքբերումներ՝ դեղերի և սարքավորումների տեսքով, ուստի հատկապես հարկային ոլորտում իրականացվող օրենսդրական բարեփոխումներն ուղղակիորեն ազդում են Կենտրոնի գործունեության վրա: Մյուս կողմից, ՀՀ կառավարության ծրագրի համաձայն նախատեսվում է միջնաժամկետ հատվածում զարգացնել առողջության պարտադիր ապահովագրության համակարգը, որը ևս դրականորեն կանդրադառնա Կենտրոնի տնտեսական գործունեության և կայունության վրա:

ՀՀ առողջապահության նախարարության քաղաքականությունը ոլորտի օրենսդրական կարգավորման, չափորոշիչների սահմանման և կանոնակարգման ուղղությամբ իր դրական ազդեցությունն է ունենում Կենտրոնի կողմից մատուցող ծառայությունների որակի, վերահսկողության և միջազգային ստանդարտների ներդրման տեսանկյունից :

ԲԱԺԻՆ IV. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆ

- Ինվազիվ սրտաբանության ուղղությամբ ծառայությունների իրականացում և կայուն աճ,
- Լրացուցիչ սարքավորումների (ծառայությունների) ավելացում,
- Կենտրոնի հասույթի ավելացում և հասույթի կառուցվածքում վճարովի ծառայությունների մասնաբաժնի ավելացում,
- Կենտրոնի շահութաբերության ցուցանիշների բարելավում,
- Անձնակազմի շարունակական մասնագիտական զարգացում և փորձի փոխանակում հանրապետությունում և արտերկրում,
- Հիվանդությունների վաղ հայտնաբերման և ամբուլատոր պայմաններում բուժման հնարավորությունների զարգացում,
- Բնակչության շրջանում առողջ ապրելակերպի մասսայականացում և արտակարգ իրավիճակներին արագ արձագանքում,
- Առողջ աշխատանքային հարաբերությունների ձևավորում և աշխատակիցների միջև փոխադարձ հարգանքի մթնոլորտի ձևավորում,
- Աշխատանքի արդյունավետության բարձրացման մեխանիզմների ձևավորում,
- Համագործակցություն հանրապետության առողջապահության համակարգի լավագույն կազմակերպությունների հետ:

Գլուխ 9. Հասույթի կանխատեսում

Հաշվի առնելով, որ Կենտրոնի հասույթի 67%-ից ավելին կազմում է պետական պատվերի շրջանակներում մատուցվող ծառայությունները, որի վրա Կենտրոնի ազդեցությունը էական լինել չի կարող, ուստի Կենտրոնը նախատեսում է իր բոլոր ջանքերն ուղղել վճարովի ծառայությունների գծով հասույթի ավելացմանը:

Կենտրոնն այս ուղղությամբ նախատեսում է՝

- Զարգացնել ամբուլատոր օղակում վճարովի ծառայությունները, մասնավորապես պետական պատվերի ծածկույթից դուրս գտնվող այն ծառայությունները, որոնք տարածաշրջանի բնակիչները ստանում են մայրաքաղաքի առողջապահական հաստատություններում , որոնք կարող էին ստանալ իրենց մարզում,
- Ավելացնել հիվանդանոցային ծառայությունների գծով հասույթը, որն իրականացվելու է առավելապես կարճաժամկետ և վիրահատական ծառայությունների ծավալի աճի միջոցով:
- Ներդնել աչքի վիրահատական ծառայություն, հաշվի առնելով Կենտրոնի ակնաբուժական կաբինետի վիրահատական բնույթի ուղեգրումների քանակը, վիրահատական ծառայության ներդրումը Կենտրոնի հասույթը կավելացնի մոտավորապես 24 000 000 (քսանչորս միլիոն) ՀՀ դրամով:

Գլուխ 10. Բուժական պրակտիկա

Հիվանդությունների վաղ հայտնաբերման և ամբուլատոր պայմաններում բուժման հնարավորությունների զարգացումը խիստ կարևոր է բազմապրոֆիլ հիվանդանոցային ծառայություններ ունեցող կենտրոնների համար, որովհետև էականորեն բարձրացնում է բուժման արդյունավետությունը, կցագրված բնակչության առողջության ցուցանիշները և նվազեցնում մահացությունը:

Այս ուղղությամբ Կենտրոնը նախատեսում է՝

- Իրազեկման և խորհրդատվական աշխատանքներ տեղամասային բժիշկների և իրեն կցագրված բնակիչների պարբերական հանդիպումների միջոցով,
- Տարեկան կանխարգելիչ բուժզննումների ներդրում, նեղ մասնագետների կողմից առաջին օղակում բուժզննումների կազմակերպում, որի միջոցով կամրապնդվի կապ բժշկի և իր բնակչի միջև, միևնույն ժամանակ ապահովելով բնակիչների առողջության հսկողությունը մասնագետների կողմից:
- Հեռավար բժշկության միջոցով բժշկի երկրորդ կարծիքի ինստիտուտի ներդրում, համաձայն որի պացիենտը վճարովի հիմունքներով կարող է ստանալ լավագույն մասնագետների երկրորդ կարծիք՝ միանգամից իր բնակավայրում:

Իմ՝ որպես փնտրենի, նպատակն է հիվանդանոցը հասցնել առնվազն երկրորդ մակարդակի:

Այս ուղղությամբ աշխատանքներն արդեն իսկ իրականացվել են սկսած 2019թ-ի մարտ ամսից: Կատարվել է վերանորոգման և արդիականացման աշխատանքներ հիվանդանոցի հին մասնաշենքում, որի արդյունքում ավելացվել է մատուցվող բժշկական ծառայությունների ծավալը, բուժառուների քանակը և ֆինանսական հոսքերը: Կատարվել է աշխատողների աշխատավարձի էական բարձրացում, գործում է աշխատանքի արդյունավետության գնահատման ճկուն մեխանիզմ, աշխատողների նկատմամբ կիրառվում է խրախուսական տարբեր միջոցառումներ՝ այդ թվում աշխատակիցներին դրամական պարգևատրմների տրամադրում: Իրականացվում է համագործակցություն և մասնագիտական օգնություն տարածաշրջանի առողջության առաջնային պահպանման և համայնքի կրթադաստիրակչական կազմակերպությունների հետ:

Մարտունու ԲԿ-ում իրականացվել է չնախատեսված (ֆորս-մաժորային) իրավիճակում ազգաբնակչության բժշկական օգնություն՝ Covid-19-ը համավարակային պայմաններում (1200 բուժառու) և 44-օրյա պատերազմի ընթացքում վիրավորում ստացած զինծառայողների (500 բուժառու):

Գլուխ 10. Կադրային քաղաքականություն

Բուժական պրակտիկան որակապես էլ ավելի բարձր մակարդակի հասցնելու և նոր ծառայություններ ավելացնելու համար կենտրոնը շարունակելու է կարևորել վերապատրաստումները և նոր հմտությունների ձեռքբերումը: Մասնավորապես՝

- Շարունակվելու են վերապատրաստումները,
- Առավել շեշտադրվելու է փորձի փոխանակումը՝ մարզային և Երևան քաղաքի լավագույն բժիշկների ներգրավվմամբ,
- Միջազգային նորագույն լուծումների դասընթացներ են կազմակերպվելու բուժական անձնակազմի համար,
- Դասընթացներ են կազմակերպվելու բժշկական անձնակազմի համակարգչային գիտելիքների բարձրացման ուղղությամբ,
- Դասընթացներ են կազմակերպվելու բուժառուների հետ շփման հմտությունները բարելավելու ուղղությամբ,
- Ինքնազարգացման այլ դասընթացներ (ժամանակի կառավարում և այլն):
- Նախատեսվում է համատեղ հուշագիր կնքել ԱԱԻ-ի հետ, ավագ և միջին բուժաշխատողների վերապատրաստումները տեղում կազմակերպելու համար, ներգրավել մասնակիցներ ոչ միայն Կենտրոնի անձնակազմի կազմից այլ նաև մոտակա համայնքների առողջապահական հիմնարկներից:

ԲԱԺԻՆ V. ՎԵՐՋԱԲԱՆ

Տնօրենի պաշտոնը զբաղեցրել եմ 07.02.2019 թվականից: Մրցույթում հաղթող ճանաչվելուց հետո նշանակվել եմ Մարտունու բժշկական կենտրոնի տնօրեն՝ Կենտրոնի գործունեությունը առավել արդյունավետ կազմակերպելու և առկա բացթողումները շտկելու համար:

Իրականացնելու եմ ծրագրով նախատեսված ընկերության զարգացման բոլոր թիրախային նպատակները:

Հստակ պատկերացնում եմ դժվարությունները և առկա խնդրները:

Պատրաստ եմ առանց ջանք ու եռանդ խնայելու լուծել ընկերության խնդիրները:

Իմ պաշտոնավարման տարիներին էականորեն բարձրացել է Կենտրոնի հեղինակությունը և բնակչության վստահությունը կենտրոնի նկատմամբ, ավելացել է բուժառուների հոսքը:

Մարտունու տարածաշրջանի ազգաբնակչության բուժօգնությունը և սպասարկումը իրականացվում է բարձր մակարդակով:

2025 թվականին նախատեսվում է ձեռք բերել շուրջ 90 000 000 (իննսուն միլիոն) ՀՀ դրամ արժողությամբ բժշկական սարքավորումներ:

Հեռանկարում բժշկական կենտրոնը տեսնում եմ հմուտ և մասնագիտական գիտելիքներով բուժ անձնակազմով և տեխնիկապես համալրված, հույս ունենալով, որ մեր Կենտրոնը կդառնա մարզային լավագույն բժշկական կենտրոններից մեկը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ-Առողջապահության նախարարություն-ՀՀ Կառավարություն համաձայնեցված և համագործակցված աշխատանքային հարաբերությունների արդյունքում:

Վերջին տարիների ընթացքում հանդիսանալով Մարտունու բժշկական կենտրոնի տնօրենը՝ փորձել եմ անել առավելագույնը՝ Կենտրոնի առաքելությունը լավագույնս իրականացնելու համար: Համառ աշխատանքի և կենտրոնին նվիրված լինելու լավագույն ապացույցներից է բարերարների կողմից իրականացված մեծածավալ ներդրումները, մասնավորապես՝ հեմոդիալիզային ծառայության ներդրման (բաժանմունքի վերանորոգման, սարքավուրումների ձեռք բերման), ընդհանուր

թերապևտիկ և վիրաբուժական բաժանմունքներում հիվանդասենյակների նորոգման, մանկական բաժանմունքի վերանորոգման ուղղությամբ և այլն:

Ես խիստ կարևորում եմ Մարտունու բժշկական կենտրոնի դերը Գեղարքունիքի մարզի և ընդհանրապես մարզային առողջապահության զարգացման գործում թե՛ սոցիալական, թե՛ առողջապահական առումով:

Ամենօրյա աշխատանքում առաջնորդվում եմ երկու արժեքներով՝ բուժառուի կյանքի որակ և բժշկի արժանապատվություն ու փորձում եմ այս սկզբունքները սերմանել նաև մեր կոլեկտիվում:

Ամենօրյա աշխատանքով գիտեմ նաև, թե ինչ խնդիրներ կան այս կազմակերպությունում և ինչ չօգտագործված ռեսուրսներ՝ համակարգն առավել օպտիմալ դարձնելու համար և պատրաստ եմ իմ ամենօրյա և հետևողական աշխատանքի շնորհիվ հասնել չօգտագործված ռեսուրսների առավելագույն կիրառմանը:

Որպես գործող տնօրեն՝ իմ աշխատանքային տարիներին (2019-2025թթ) անցել եմ առողջապահության հանրային կառավարման դասընթացներ, ունեմ համապատասխան վկայական և մասնակցել եմ ՀՀ ԱՆ ԱԱԻ-ի կողմից կազմակերպվող դասընթացին, ստացել համապատասխան գիտելիքներ ներքոնշյալ ոլորտներում.

- Մարդկային ռեսուրսների կառավարում
- Ֆինանսների կառավարում
- Համաշխարհային առողջապահական դիվանագիտություն
- Առողջապահական ինֆորմատիկա
- Բիզնես տնտեսագիտություն
- Կազմակերպչական վարքագիծ և առաջնորդություն
- Հիվանդանոցի հավատարմագրում
- Վիրահատությունների կառավարում :

Առաջնորդվել եմ ՀՀ օրենքներով, ՀՀ կառավարության որոշումներով և առողջապահության նախարարության կողմից իրականացվող քաղաքականության դրույթներով:

Իմ անցած մասնագիտական ուղին, ունեցածս կառավարման հմտությունները և արժեք ստեղծելու պատրաստակամությունը հնարավորություն են տալիս անմնացորդ ծառայելու Մարտունու բժշկական կենտրոնին՝ հաջողությունների և ձեռքբերումների նոր փուլ տեղափոխելու համար: